ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա - Սևան» ԲԲԸ
10 մայիսի 2011թ. թիվ N 47-11
Խորհրդի նիստում
«Արփա - Սևան» ԲԲԸ
Խորհրդի նախագահ
Ա. Դավթյան
"10" մայիս 2011թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Երևան 2011թ.

ԳԼՈՒԽ 1.
Ընդհանուր դրույթներ

1.Կանոնակարգումը

1.1. Սույն Կանոնակարգը կանոնակարգում է «Արփա-Սևան» ԲԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները:

2.Կառուցվածքը, հասկացությունները

2.1. Սույն Կանոնակարգը բաղկացած է՝
- Գլուխ 1՝ «Ընդհանուր դրույթներ»,
- Գլուխ 2՝ «Մրցույթի մասնակիցները, մրցույթի կազմակերպումը և անցկացումը»:

2.2. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կանոնակարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.
- «Ընկերություն»՝ «Արփա-Սևան» ԲԲԸ,
- «Կանոնակարգ»՝ Սույն կանոնակարգը,
- «Աուդիտ»՝ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ,
- «աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,
- «աուդիտորական խումբ»՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Ընկերության աուդիտի իրականացման մեջ:

3. Ուժի մեջ մտնելը

3.1. Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից այն հաստատելու պահից և վերաբերում է 2011թ. և դրանից հետո աուդիտի իրականացմանը:

3.2. Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 128-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի օգոստոսի 4-ի «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշման համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածը:

3.3. Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 2.
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Չափանիշները

4.1. Ընկերության աուդիտն իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.
1) առնվազն 3 տարվա աուդիտորական գործունեության փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),
2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ)

աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
3) աուդիտորական կազմակերպությունը հաշվետու թողարկողի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս ՀՀ Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու հաշվետու թողարկողի, աուդիտորական կազմակերպության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Ընտրությունը

5.1. Ընկերության դիտորդ խորհուրդը սահմանում է թվով 3 աուդիտորական կազմակերպությունների կարճ ցանկ, որոնք բավարարում են ընտրության նվազագույն չափանիշներին:
5.2. Քննարկումների արդյունքում Դիտորդ խորհուրդը որոշում է կայացնում Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել աուդիտորական կազմակերպության թեկնածություն: Որոշումը կայացնելիս հաշվի են առնվում նաև հետևյալ հանգամանքները, գործոնները

- աուդիտորական կազմակերպության ընդհանուր փորձառությունը,
- նմանատիպ աշխատանքների իրականացման փորձառությունը,
- աուդիտորական խմբում ներգրավված որակավորված աուդիտորների տեսակարար կշիռը,
- աուդիտորական խմբում ներգրավված մասնագետների փորձառությունը,
- գինը,
- միևնույն պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել առավելագույնը 3 անընդմեջ տարիների աուդիտը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ չափանիշներ, պայմաններ, որոնց դեպքում աուդիտորական կազմակերպությունները չեն կարող իրականացնել Ընկերության աուդիտը:

5.3. Ընդհանուր ժողովը հաստատում է աուդիտորական կազմակերպությանը, իսկ վերջինս հետ պայմանագիրը ստորագրում է Դիտորդ խորհրդի կողմից լիազորված անձը:
5.4. Պայմանագիրը կնքվում է նվազագույնը 3 տարի ժամկետով: